ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան «16» 05 2022 թ.

«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ հետագայում՝ «Գործընկեր 1»՝ ի դեմս ռեկտոր Նորիկ Սարիբեկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ հետագայում՝ «Գործընկեր 2»՝ ի դեմս տնօրեն Իրինա Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով «Գործընկեր 1»-ը և «Գործընկեր 2»-ը պարտավորվում են միջին և բարձրագույն մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել լայնածավալ համագործակցություն՝ ուսումնամեթոդական աշխատանքների կատարման, մասնագետների վերապատրաստման, առաջավոր փորձի փոխանակման և վերլուծության, բենչմարքինգի, նորարար ծրագրերի ներդրման, գիտական, հետազոտական աշխատանքների, գիտական համաժողովների, թեմատիկ մշակութային միջոցառումների, սեմինարների անցկացման և այլ համատեղ ծրագրերի իրականացման ուղղություններով:

2. ՊԱՅՄԱՆԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և գործում է համագործակցության պայմանագրի կատարման 5 (հինգ) տարի ժամկետով:

2.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **«Գործընկեր 1»-ն իրավունք ունի.**

3.1.1 Համագործակցության ժամանակացույցին համապատասխան այցելել և տեղեկանալ **«Գործընկեր 2»-ի** պայմանագրով նախատեսված գործառույթների կատարման արդյունավետության մասին:

3.2. **«Գործընկեր 1»-ը պարտավոր է.**

3.2.1. Սովորողներին (պոտենցիալ դիմորդներին) ներկայացնել Համալսարանի կրթական առանձնահատկությունները և առավելությունները, նորարարական կրթական ծրագրերը, մասնագիտությունները և մասնագիտացումները:

3.2.2. Աջակցել համատեղ միջոցառումների, թեմատիկ սեմինարների, մանկավարժական պրոբլեմային քննարկումների, վարպետության դասերի, թեմատիկ բանավեճերի անցկացմանը:

3.2.3. Ապահովել սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

3.3. «**Գործընկեր 2**»-ն իրավունք ունի.

3.3.1. Համագործակցության ժամանակացույցին համապատասխան այցելել և տեղեկանալ պայմանագրով նախատեսված «**Գործընկեր 1**»-ի կողմից պարտավորությունների կատարման արդյունավետության մասին:

3.4. «**Գործընկեր 2**»-ը պարտավոր է.

3.4.1. Կազմակերպել մշակութային միջոցառումներ, ուսումնամեթոդական քննարկումներ, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, անցկացնել վարպետության դասեր:

3.4.2. Ապահովել սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Սույն պայմանագրի ընթացքում կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով փոխհամաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.3. Սույն պայմանագիրը կազմված է հայերենով, երկու հավասարազոր օրինակներից, որոնցից մեկը մնում է «**Գործընկեր 1**» -ի մոտ, իսկ մյուսը՝ «**Գործընկեր 2**»-ի:

4.4. Սույն պայմանագրի կապակցությամբ կողմերը հայտարարություններ ու դիտողություններ չեն ներկայացրել, գրված է ճիշտ, որի համար ստորագրում են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Գործընկեր 1»	« Գործընկեր 2»
«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ	«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ
Ք. Երևան, Մարշալ Բաբաջանյան 38	ք. Երևան, Արշակունյաց 40
_____ Ե. Սարիբեկյան	_____ Ի. Հարդանյան

18 մայիսի 2023թ.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Ավանդական բժշկության համալսարանի» և «Պրոֆիզոր- նկարիչ Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջի»

Պրոֆիզոր- նկարիչ Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջը (այսուհետ քոլեջ) ի դեմս տնօրեն Ի. Սարգսյանի, ով գործում է քոլեջի կանոնադրության հիման վրա, և «Ավանդական բժշկության համալսարանը» (այսուհետ համալսարան), ի դեմս ռեկտոր Ն. Սարիբեկյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, կարևորելով աշխատաշուկայի համալրումը բժշկական կրթություն ունեցող մասնագետներով, և այդ մասնագետների շարունակական կրթությունն ու զարգացումը, հաստատում են իրենց համաձայնությունը հետևյալի մասին.

1. Քոլեջը համաձայնում է

• Հյուրընկալել համալսարանի մասնագետներին ուսանողների համար թեմատիկ դասընթացներ, ակնարկային դասախոսություններ վարելու նպատակով:

• Համագործակցել համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և գիտակրթական կենտրոնի կազմի հետ՝ փորձի փոխանակման, դասավանդման մեթոդների, հետազոտական աշխատանքների, կրթական ծրագրերի ուսումնասիրման ոլորտներում:

• Հանդես գալ նոր նախաձեռնություններով ու առաջարկություններով, որոնք կբխեն կրթական ծրագրերի նպատակներից և քոլեջի առջև դրված խնդիրներից

. Կատարել առաջավոր փորձի, կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ բենչմարքինգ:

. Փորձի փոխանակման արդյունքում՝ համագործակցություն երկու ՄՈՒՀ-ի ՈՆԱԿ-ի հետ:

2. Համալսարանը համաձայնում է

. Քոլեջի միջին մասնագիտական կրթությունով, բարձր առաջադիմությամբ և ուսումը շարունակող շրջանավարտներին իրազեկել ոլորտի նորարարությունների մասին և շարունակական կրթության հնարավորություն ընձեռել քոլեջի ուսանողների համար: Հնարավորության դեպքում տրամադրել ուսումնաօժանդակ գրականություն և հարցաշարեր՝ նախապես պատրաստվելու համար:

• Կազմակերպել բաց դռների օրեր՝ քոլեջի ուսանողների համար, մասնակից դարձնել գիտակրթական սեմինարների, հետազոտական աշխատանքների ներգրավմանը:

• Կազմակերպել պրակտիկաներ քոլեջի ուսանողների համար:

• Դիտարկել երկկողմանի ներկայացված նախաձեռնություններն ու առաջարկությունները և հնարավորության դեպքում, տալ համապատասխան ընթացք:

ՈՒսանողներին մասնակից դարձնել լաբորատորիաներում ընթացող հետազոտական աշխատանքներին և թույլատրել իրենց կողմից իրականացնել հետազոտական աշխատանքներ:

3.Կողմերի պայմանագրային պարտավորվածությունները

3.1Կողմերը պատասխանատվություն են կրում սույն կետերի կատարման համար:

3.2 Ծագած բոլոր վեճերը լուծում են համաձայն պայմանագրի:

3.3 Պայմանագրի գործողության ժամկետը՝ 5 տարի:

5. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոֆիզոր- նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ	«Ավանդական բժշկության համալսարան» Ավան, Մարշալ Բաբաջանյան փող., 38շ.
Երևան Իսահակյան 30	Հեռ. 61-62-90
Հեռ. (010) 58-03-07	Էլ. հասցե info@utm.am
Տնօրեն Բ. Սարգսյան	Ռեկտոր Ն. Սարիբեկյան
Կ.Տ.	Կ.Տ.